ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2004-2006 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 25.12.2003

Հոդված 1. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2004-2006 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը (հավելվածը կցվում է):

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

17 հունվարի 2004թ.
ՀՕ-28-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2004-2006 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ծրագիրը մշակվել է «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան եւ սահմանում է 2004-2006 թվականների պետական վիճակագրական գործունեության ուղղությունները՝ ըստ վիճակագրության տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական եւ բնապահպանական բնագավառների:

Հայաստանի Հանրապետության 2004-2006 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը (այսուհետ՝ Եռամյա ծրագիր) ներառում է երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական եւ բնապահպանական իրավիճակի դիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվությունը՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը եւ ծախսերի արդյունավետությունը:

Համաձայն «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ Եռամյա ծրագրով նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները պետք է հաշվի առնեն երկրի ցուցանիշների համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին, երկարաժամկետ միջակայքում միտումները բացահայտելու տեսանկյունով ապահովեն դրանց հնարավոր կայուն պարբերականությունը եւ տարեկան կտրվածքով պետական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների հետ համաչափությունը:

Եռամյա ծրագրի կատարումը եւ ֆինանսավորումը պայմանավորված է եւ բխում է յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից:

ԲԱԺԻՆ 1. ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում պետական վիճակագրության առջեւ ծառացած խնդիրներն են՝

ա) միջազգային, ֆինանսական, տնտեսական, հասարակական եւ այլ կազմակերպությունների կողմից ընդունված, ինչպես նաեւ ազգային չափանիշներին համապատասխան վիճակագրության միասնական մեթոդաբանության ապահովումը.

բ) տնտեսական ու հասարակական գործընթացների եւ դրանց արդյունքների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության համակարգի կազմակերպումը եւ համակարգումը.

գ) պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին (այդ թվում՝ միջազգային), գիտակրթական հաստատություններին, լրատվամիջոցներին, ինչպես նաեւ հանրությանը ամփոփ տեղեկատվությամբ ապահովումը.

դ) վիճակագրական տեղեկատվական աղբյուր հանդիսացող փաստաթղթերի ձեւերի մշակման համակարգումը.

ե) վիճակագրական տեղեկատվության արժանահավատության, ամբողջականության ապահովումը, ներառյալ՝ այդ նպատակով վիճակագրական սկզբնական (անվանական) տվյալների անանունության (գաղտնիության) պահպանման նկատմամբ վերահսկողության կազմակերպումն ու իրականացումը.

զ) վիճակագրական աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի վարումը եւ դրա պարբերական արդիականացումը.

է) տեխնիկատնտեսական եւ սոցիալական տեղեկատվության դասակարգիչների մշակումը եւ դրանց ներդաշնակեցումը (այդ թվում՝ շարունակական կատարելագործման միջոցով) միջազգայնորեն ընդունված ու կիրառվող դասակարգումների հետ:

ԲԱԺԻՆ 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Պետական վիճակագրության ոլորտում որդեգրված ռազմավարությունը խարսխվելու է ազատական տնտեսակարգի կառուցման, քաղաքացիական հասարակարգի ձեւավորման եւ ժողովրդավարության սկզբունքների ծավալման քաղաքականության իրագործման հիմունքներին:

2. Վիճակագրությունը պետք է պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների, հասարակության, բիզնեսի պահանջմունքների բավարարման համար ծրագրային աշխատանքի ընթացքում ապահովի անկողմնակալություն (անկախություն), հրատապություն, վիճակագրական տեղեկատվությունից օգտվելու հավասար հնարավորություններ, արդյունավետ աշխատանք, սկզբնական (անվանական) տվյալների գաղտնիություն, տեղեկատվության սպառողների մարկեթինգ եւ այլն:

Նշված սկզբունքների ապահովման ենթատեքստով, մասնավորապես, նախատեսվում է՝

ա) վիճակագրության միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանման համատեքստում շարունակել վիճակագրության ինստիտուցիոնալ վերափոխման գործընթացները՝ հետամուտ լինելով նաեւ վիճակագրական հարաբերությունները կարգավորող օրենսդրական համապատասխան փոփոխությունների իրականացմանը.

բ) տնտեսական գործունեության տեսակների ու դրանք իրականացնող սուբյեկտների քանակի աճով պայմանավորված՝ աստիճանական անցում կատարել տեղեկատվության հավաքագրման ընտրանքային եղանակների ներդրմանն ու կիրառմանը.

գ) բարձրացնել տվյալների նախապատրաստման օպերատիվությունը՝ օգտագործելով տվյալների հավաքագրման ժամանակակից միջոցները եւ մեթոդները, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման եւ կիրառման միջոցով.

դ) վիճակագրության մեթոդաբանության զարգացմանը զուգընթաց շարունակել ներկայումս գործող վիճակագրական դիտարկման փաստաթղթերում արտացոլված ցուցանիշների կազմի ու բովանդակության վերանայման, վիճակագրական դիտարկման փաստաթղթերի միասնականացման աշխատանքները՝ միաժամանակ նպատակ ունենալով նվազագույնի հասցնել տեղեկատվության որակի, ամբողջականության եւ արժանահավատության վրա վերջինիս հնարավոր բացասական ազդեցությունները.

ե) վիճակագրական տեղեկատվության համադրելիության եւ միասնականության ապահովման նկատառումներով պայմանավորված՝ շարունակել տեխնիկատնտեսական եւ սոցիալական տեղեկատվության դասակարգման եւ կոդավորման միասնական համակարգի ստեղծումը՝ ներդաշնակեցված միջազգային դասակարգումների հետ.

զ) կանանց հիմախնդիրների վիճակագրական հաշվառման հետագա կատարելագործման եւ այդ բնագավառում միջազգային համադրումների ապահովման նկատառումներով պայմանավորված՝ շարունակել գենդերային կտրվածքով վարվող վիճակագրության ամբողջականացմանն ուղղված աշխատանքները.

է) վիճակագրական տեղեկատվության սպառողների (օգտագործողների) պահանջմունքների առավել ամբողջական եւ օպերատիվ բավարարման նպատակով ընդլայնել վիճակագրական հրապարակումների (տեղեկագրեր, ժողովածուներ եւ այլն) կազմ ու բովանդակությունը՝ ընդլայնելով նաեւ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ տարածման հնարավորությունները.

ը) վիճակագրական տվյալների որակի եւ թափանցիկության ապահովման, վիճակագրությունում միջազգային չափանիշների ներդրման եւ կիրառման նկատառումներով պայմանավորված՝ անցում կատարել տեղեկատվության տարածման միջազգայնորեն ընդունված չափանիշների կիրառմանը (մասնավորապես անդամակցել Արժույթի միջազգային հիմադրամի մշակած «Տվյալների տարածման հատուկ ստանդարտին»), ինչը ենթադրում է նաեւ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական ինտերնետային էջի անխափան շահագործում եւ տեղեկատվության կազմի ու որակի, ինչպես նաեւ մեթատվյալների պարբերական արդիականացում.

թ) զարգացնել վիճակագրական տվյալների բազաները, մասնավորապես պարբերաբար (նվազագույնը՝ ամենամյա) արդիականացնել բիզնես - ռեգիստրի տվյալների բազան (իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի մասով), ձեւավորել եւ վարել ճյուղային եւ տարածքային ռեգիստրները.

ժ) անցում կատարել վարչական ռեգիստրների միջոցով տեղեկատվության հավաքագրման մեխանիզմի ամբողջական կիրարկմանը՝ հաշվի առնելով պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերով սահմանված համապատասխան աշխատանքների իրականացման ապահովումը.

ժա) համայնքների անձնագրերի ներդրմանը եւ վարմանը զուգընթաց՝ կատարելագործել եւ ընդլայնել տարածքային վիճակագրության վարման համար անհրաժեշտ ցուցանիշների կազմ ու բովանդակությունը.

ժբ) միջազգային համագործակցության շրջանակում ընդլայնել տվյալների ընդգրկման դաշտը՝ կատարելագործելով տվյալների հավաքագրման հիմական ենթակառուցվածքը, եւ ավելացնել վիճակագրական հետազոտությունների հաճախականությունն ու քանակը.

ժգ) ստեղծել վիճակագրական տվյալների հիմապաշար՝ կիրառելով տվյալների (դինամիկ շարքերի)՝ անմիջականորեն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական ինտերնետային էջից հարցման միջոցով ստանալու մեխանիզմը.

ժդ) արդիականացնել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տեղային (լոկալ) համակարգչային ցանցը՝ ցանցային ռեսուրսների կորպորացման եւ կորպորատիվ ցանցի կառուցման միջոցով, ինչը կմիավորի Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի առանձնացված եւ կառուցվածքային ստորաբաժանումները:

ԲԱԺԻՆ 3. ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԸ

Վիճակագրության ոլորտը բնութագրվում է մեթոդաբանության մշտական կատարելագործման անհրաժեշտությամբ, ինչը պայմանավորված է մի կողմից՝ վիճակագրական տեղեկատվության նկատմամբ մշտապես աճող պահանջներով՝ տվյալների արժանահավատության եւ օպերատիվության բնագավառում, ինչպես նաեւ վիճակագրական տեղեկատվության ստացման գիտական հիմավորվածության եւ միջազգային չափանիշներին համապատասխանության առումով, իսկ մյուս կողմից՝ սկզբնական (անվանական) բոլոր տիպի տվյալների չտարածմամբ:

Վիճակագրության հետագա զարգացումը նախատեսվում է 2004-2006 թվականներին իրականացնել հետեւյալ միջոցառումային ծրագրերի շրջանակում.

ԳԼՈՒԽ 3.1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

3.1.1. Ազգային հաշիվներ

Հիմք ընդունելով Արժույթի միջազգային հիմադրամի «Տվյալների տարածման ընդհանուր համակարգի» պահանջները, որոնց իրականացման պարտավորությունը Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է 2001

թվականի մարտի 29-ից՝ անդամակցելով նշված համակարգին, ինչպես նաեւ միջազգային կազմակերպությունների կողմից մշակված «Ազգային հաշիվների համակարգ 93» մեթոդաբանությունը՝ ազգային հաշիվների կազմման առումով նախատեսվում է իրականացնել հետեւյալ միջոցառումները.

ա) «Ազգային հաշիվների համակարգ-93» միջազգային մեթոդաբանության համաձայն՝ ամբողջ տնտեսության, ինչպես նաեւ կառուցվածքային հատվածների մակարդակով հաշիվների կազմում.

բ) համախառն ներքին արդյունքի եւ այլ մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկների իրականացում.

գ) ազգային հարստության բաղադրիչների հաշվարկ.

դ) բնակչության դրամական եկամուտների եւ ծախսերի հաշվարկ.

ե) «Ծախսեր-թողարկում» աղյուսակների կազմման աշխատանքների շարունակում, տեղեկատվական աղբյուրների հստակեցում.

զ) ազգային հաշիվների բաղադրիչները ներկայացնող ժողովածուների նախապատրաստում եւ հրապարակում.

է) ազգային հաշիվներում կիրառվող՝ ժողովրդական տնտեսության ճյուղերի նախկին համամիութենական դասակարգումից անցում տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչին.

ը) ազգային հաշիվների բաղադրիչների հաշվարկների համար տեղեկատվական բազայի կատարելագործում՝ տնային տնտեսությունների հետազոտությունների միջոցով հավաքագրվող տեղեկությունների ընդլայնման, տնային տնտեսությունների սպառման, ինչպես նաեւ ոչ ֆորմալ գործունեության չափերի գնահատման միջոցով.

թ) «Չդիտարկվող տնտեսության» չափերի գնահատման մեթոդաբանության կատարելագործում, մասնավորապես՝ իրականացվող ընտրանքային հետազոտությունների կիրառմամբ.

ժ) ազգային հաշիվների հաշվարկների ավտոմատացման աշխատանքների ներդրում:

3.1.2. Արդյունաբերություն

ա) արդյունաբերության վիճակագրության ընդլայնում՝ տնտեսական գործունեության տեսակների՝ Հայաստանի դասակարգչով սահմանված գործունեության տեսակների ամբողջական հաշվառմամբ.

բ) Եվրամիության երկրներում կիրառվող, ըստ գործունեության տեսակների, արտադրանքի վիճակագրական դասակարգման ներդրում, որը համադրելի է տնտեսական գործունեության տեսակների եվրոպական դասակարգման հետ.

գ) տեղեկատվության հավաքագրման, մշակման եւ ամփոփման մեթոդների եւ ձեւերի կատարելագործում՝ ցուցանիշների հաշվարկման համար հաշվողական տեխնիկայի, տեղեկատվական ցանցերի եւ հատուկ ծրագրերի կիրառման ընդլայնմամբ.

դ) անցում տեղեկատվության հավաքագրման, մշակման եւ ամփոփման ընտրանքային եղանակներին, որը կիրականացվի՝ ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի եւ դրանց ընտրանքային համամասնությունների.

ե) ընտրանքային դիտարկման մեխանիզմների կիրառմանը զուգահեռ գործունեության առանձին տեսակների համար (ըստ ցածր առաձգականությամբ ապրանքների արտադրության բազային ցուցանիշների) չդիտարկվող (չհաշվառվող) դաշտի գնահատման մեթոդաբանության կատարելագործում՝ օգտագործելով ինչպես տնային տնտեսությունների, այնպես էլ այլընտրանքային հետազոտությունների արդյունքները.

զ) արդյունաբերությունը բնութագրող ամբողջական եւ հավաստի տեղեկատվության ապահովման նպատակով բնական գազի տեղափոխման եւ բաշխման, ինչպես նաեւ ջրի հավաքագրման, մաքրման եւ բաշխման ծավալների հաշվառման համար վիճակագրական դիտարկման փաստաթղթերի մշակում, ներդրում, տեղեկատվության հավաքագրում եւ տեղեկատվական բազայի ձեւավորում.

է) արդյունաբերության վիճակագրության նկարագիրը եւ առանձնահատկությունները բնութագրող ժողովածուների (տեղեկագրերի) հրապարակում:

3.1.3. Գյուղատնտեսություն

ա) գյուղատնտեսության ոլորտի վիճակագրության վարման բնագավառում տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի ներդրում.

բ) գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցի ներկայացուցչականությունն ապահովելու նպատակով ընտրանքային եղանակների կատարելագործման ճանապարհով գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման ցանցի պարբերական արդիականացում, ինչը կհանգեցնի հավաքագրված վիճակագրական տվյալների ամբողջականության, ներկայացուցչականության եւ արժանահավատության բարձրացմանը.

գ) գյուղատնտեսության վիճակագրական տվյալների հավաքագրման եւ մշակման մեթոդաբանության կատարելագործում ու արդիականացում.

դ) բուսաբուծական եւ անասնաբուծական մթերքի արտադրության առանձնահատկություններից ելնելով՝ դրանց ծավալների ճշգրտման մեխանիզմների եւ մեթոդաբանությունների մշակում ու կիրառում.

ե) տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի ներդրման հետ կապված՝ ձկնորսության, ձկնաբուծության եւ անտառաբուծության վերաբերյալ ամբողջական եւ հավաստի տեղեկատվության ստացման նպատակով վիճակագրական դիտարկման փաստաթղթերի մշակում, ներդրում, տեղեկատվության հավաքագրում եւ տեղեկատվական բազայի ձեւավորում ու արդիականացում.

զ) գյուղատնտեսության վիճակագրությունն արտացոլող վիճակագրական ժողովածուների (տեղեկագրերի) հրապարակում:

3.1.4. Շինարարություն

ա) շինարարության վիճակագրության վարման բնագավառում տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի ներդրում.

բ) շինարարության հիմնական ցուցանիշների հավաքագրման, մշակման եւ ամփոփման մեթոդաբանության կատարելագործում.

գ) շինարարության վիճակագրության ամբողջականացման նպատակով տեղեկատվական բազաների ձեւավորում եւ արդիականացում.

դ) բնակչության միջոցների հաշվին իրականացված շինարարության չհաշվառված ծավալների բացահայտման եւ վիճակագրական ցուցանիշների արժանահավատության բարձրացման ու համընդգրկունության ապահովման նպատակով դիտարկումների պարբերաբար անցկացում.

ե) շինարարության վիճակագրության նկարագիրն արտացոլող վիճակագրական ժողովածուների (տեղեկագրերի) հրապարակում:

3.1.5. Տրանսպորտ եւ կապ

ա) տնտեսական գործունեության տեսակների՝ Հայաստանի դասակարգչին համապատասխան՝ տրանսպորտի եւ կապի ոլորտների վիճակագրության վարում.

բ) ավտոմոբիլային տրանսպորտի հիմնական ցուցանիշների (բեռնափոխադրումներ, բեռնաշրջանառություն, ուղեւորափոխադրումներ, ուղեւորաշրջանառություն) հաշվարկման մեթոդաբանության կատարելագործում եւ բարելավում.

գ) ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղեւորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների հիմնական ցուցանիշների (ուղեւորափոխադրումներ, ուղեւորաշրջանառություն, մեքենաների կատարած վազք, մեքենաների երթեր) ամբողջականացման նպատակով ընտրանքային դիտարկումների պարբերական անցկացում.

դ) տրանսպորտի եւ կապի վիճակագրության նկարագիրն արտացոլող վիճակագրական ժողովածուների (տեղեկագրերի) հրապարակում:

3.1.6. Առեւտուր եւ այլ ծառայություններ